ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՒՐԳԵՆ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 1-ին փողոցը (սկսվում է Բեկնազարյան, Մելքումովի և Ֆուչիկի փողոցների խաչմերուկից, հասնում Դավթաշենի 10-րդ փողոց), Դավթաշենի 1-ին փողոց, 1-ին նրբանցքը (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Աշտարակի խճուղի), Դավթաշենի 1-ին փողոց, 2-րդ նրբանցքն (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Յուրի Երզնկյան փողոց) անվանակոչել խորհրդային և հայ ռազմական գործիչ, Հայաստանի ազգային հերոս, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի անվամբ՝ «Գուրգեն Դալիբալթայան փողոց», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 1-ին նրբանցք», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 2-րդ նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՒՐԳԵՆ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գուրգեն Դալիբալթայանը ծնվել է 1926 թվականի հունիսի 5-ին, Վրաստանում:

1934-1944 թվականներին սովորել է Գորելովկայի միջնակարգ դպրոցում, 1944-1945 թվականներին՝ Մախաչկալայի հետևակային ուսումնարանում, 1945-1947 թվականներին՝ Թբիլիսիի հետևակային ուսումնարանում, 1958-1961 թվականներին՝ Մոսկվայի Մ. Ֆրունզեի անվան զինվորական համազորային ակադեմիայում: 1969 թվականին ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից հրամանատարական կազմի բարձրագույն ակադեմիական դասընթացները:

1947-1991 թվականներին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ՝ 1947-1951 թվականներին Անդրկովկասյան ռազմական օկրուգի 89-րդ հրաձգային Կարմիր աստղի շքանշանակիր Կարմրադրոշ Թամանյան դիվիզիայի 526-րդ առանձին գնդի դասակի հրամանատար (ք. Էջմիածին): 1951-1956 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 89-րդ հրաձգային Կարմիր աստղի շքանշանակիր Կարմրադրոշ Թամանյան դիվիզիայի 526-րդ առանձին գնդի ուսումնական վաշտի հրամանատար (ք. Էջմիածին): 1956-1957 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 73-րդ մեխանիզացված դիվիզիայի 34-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար (ք. Երևան): 1957-1958 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 73-րդ մեխանիզացված դիվիզիայի 34-րդ հրաձգային գնդի գումարտակի շտաբի պետ (ք. Երևան): 1961-1963 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 295-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 135-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար (ք. Պերեքիշքյուլ): 1963-1965 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 60-րդ մոտոհրաձգային դիվիզիայի գնդի հրամանատարի տեղակալ (ք. Պրիշիբ): 1965-1967 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 60-րդ մոտոհրաձգային դիվիզիայի գնդի հրամանատար (ք. Պրիշիբ): 1967-1969 թվականներին՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ (ք. Կիրովաբադ): 1969-1975 թվականներին՝ Սիբիրյան ռազմական օկրուգի 242-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատար (ք. Աբական): 1975-1980 թվականներին՝ Հարավային զորախմբի շտաբի պետի առաջին տեղակալ (ք. Բուդապեշտ): 1980-1987 թվականներին՝ Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով (ք. Դոնի Ռոստով):

1991 թվականին Գուրգեն Դալիբալթայանը հայրենիքի կանչով եկել է Հայաստան և զինվորագրվել է Հայաստանի ազգային բանակի կազմավորման բարդ ու դժվարին գործին: Լինելով փորձառու զինվորական՝ նա իր խորհուրդներով և փորձառությամբ օգնել է նորաստեղծ զինված ուժերի երիտասարդ սպաներին: Անձամբ ղեկավարել է մի շարք մարտական գործողությունների պլանների մշակման աշխատանքները: 1991 թվականին եղել է Հայաստանի Նախարարների խորհրդին առընթեր Հայաստանի պաշտպանության կոմիտեի շտաբի պետ: 1991 թվականին Հայաստանի Նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-նախարարների խորհրդին կից պաշտպանության կոմիտեի նախագահի տեղակալ: 1991-1992

թվականներին ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ: 1992 թվականի օգոստոսից մինչև 1993 թվականի սեպտեմբեր զբաղեցրել է Հայաստանի պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնը: 1993-2007 թվականներին եղել է Հայաստանի Նախագահի խորհրդական, Գլխավոր ռազմական տեսուչ: 2007 թվականից՝ Հայաստանի պաշտպանության նախարարի գլխավոր խորհրդական:

1991-1994 թվականներին մասնակցել է ԼՂ ինքնապաշտպանական և ազատագրական ռազմագործողությունների մարտական պլանների մշակման աշխատանքներին, անձամբ ղեկավարել Խոջալուի ազատագրման, Լաչինի մարդասիրական միջանցքի բացման, Գորիս-Լաչինի ռազմական գործողության, Քելբաջարի կրակակետերի վնասազերծման ռազմական գործողությունները:

1971 թվականին Գուրգեն Դալիբալթայանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում: 1987-1991 թվականներին գտնվել է ԽՍՀՄ Զինված ուժերի պահեստազորում: 1992 թվականին Հայաստանի Նախագահի հրամանագրով Գուրգեն Դալիբալթայանին շնորհվել է գեներալ-լեյտենանտի, իսկ 1996 թվականին՝ գեներալ-գնդապետի զինվորական կոչում: 2001 թվականին արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը: 2021 թվականին Գուրգեն Դալիբալթայանին հետմահու շնորհվել է Հայաստանի ազգային հերոսի կոչումը:

Գուրգեն Դալիբալթայանը մահացել է 2015 թվականի սեպտեմբերի 1-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետն առաջարկվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 1-ին փողոցը (սկսվում է Բեկնազարյան, Մելքումովի և Ֆուչիկի փողոցների խաչմերուկից, հասնում Դավթաշենի 10-րդ փողոց), Դավթաշենի 1-ին փողոց, 1-ին նրբանցքը (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Աշտարակի խճուղի), Դավթաշենի 1-ին փողոց, 2-րդ նրբանցքն (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Յուրի Երզնկյան փողոց) անվանակոչել խորհրդային և հայ ռազմական գործիչ, Հայաստանի ազգային հերոս, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի անվամբ՝ «Գուրգեն Դալիբալթայան փողոց», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 1-ին նրբանցք», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 2-րդ նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ